



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունիսի 2005թ.

N 302

ք.Ստեփանակերտ

Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը հաստատելու մասին

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 29-րդ հոդվածին և «Քաղաքաշինության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ, 14¹-րդ ու 17-րդ հոդվածներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը՝ մեկամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այն համայնքների ցանկը, որոնցում ընդգրկված բնակավայրերն ունեն կիրառման համար պիտանի գլխավոր հատակագծեր:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 20-ի «Հողերի օգտագործման սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 216 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա/ որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին».

բ/ ուժը կորցրած ճանաչել որոշման 1-ին կետի «ա» ենթակետը.

գ/ որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սահմանել, որ մինչև հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներ կազմելը՝ հողերի օտարման ու օգտագործման տրամադրման համար կազմվում են հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ:».

դ/ որոշման 6-րդ կետի «իրականացնել» բառից հետո ավելացնել «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով՝ արտահայտությունը.

ե/ որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Հաստատված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների փոփոխությունները կատարվում են սույն կարգին համապատասխան:»:

ԼՂՀ վարչապետ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԿԱՐԳ
Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների
մշակման ու հաստատման

1. Սույն կարգով սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքներում հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների /այսուհետ՝ սխեմա/ նախագծման առաջադրանքի /այսուհետ՝ առաջադրանք/ կազմման, սխեմաների մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման ընթացակարգերին, ինչպես նաև դրանց կազմին և բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները:

2. Սխեման քաղաքային կամ գյուղական համայնքի /այսուհետ՝ համայնք/ սահմաններում ընդգրկված բոլոր հողատարածքների հողօգտագործումը կանոնակարգող, պետական ու համայնքի հողերի տարածքային զարգացման և արդյունավետ օգտագործման հիմնական ուղղություններն ամրագրող քաղաքաշինական ու հողաշինարարական միացյալ /կոնսոլիդացված/ գոտիավորման փաստաթուղթ է, որը ներառում է հողերի բաշխումն ըստ նպատակային նշանակության՝ հիմնական /բազային/ տեսակների սահմանմամբ և քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, գյուղատնտեսական, ջրային, ինժեներակառուցարարական և այլ բնույթի սահմանափակումների ամրագրմամբ:

3. Սխեմայում հաշվի են առնվում հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով, այդ թվում՝ համայնքների /բնակավայրերի/ գլխավոր հատակագծերով սահմանված դրույթները, ինչպես նաև, հատուկ պահպանվող տարածքների, հատուկ նշանակության հողերի, անտառային և ջրային հողերի օգտագործման ռեժիմները, այլ նպատակային նշանակության հողերի օգտագործման սահմանափակումները:

4. Գոտիավորմամբ սահմանված պահանջները տարածվում են անշարժ գույքի բոլոր օբյեկտների վրա՝ անկախ սեփականության ձևից, և սեփականատերերի կամ օգտագործողների փոփոխման դեպքում պահպանում են իրենց ուժը:

5. Սխեման հիմք է հանդիսանում բնակավայրերի, դրանց առանձին հատվածների և կառուցապատման համար նախատեսված կամ կառուցապատված այլ տարածքների գոտիավորման նախագծերի, իսկ գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝ հողաբաժանման գծագրերի մշակման համար:

6. Գյուղական համայնքների և մինչև 15 հազար բնակիչ ունեցող քաղաքային համայնքների համար բնակավայրերի գոտիավորման նախագծերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001թվականի հունիսի 24-ի «Բնակավայրերի տարածքների գոտևորման

նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» թիվ 195 որոշմամբ սահմանված կարգով մշակվում են սխեմաների հետ համատեղ:

7. Համայնքների վարչական սահմաններում ընդգրկված տարածքների համար սխեմաները, բացառությամբ սույն կարգի 9-րդ կետով սահմանված դեպքերի, մշակվում են համայնքի գլխավոր հատակագծի նախագծային նյութերի կազմում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ գլխավոր հատակագծերի առաջադրանքներում սույն կարգով սահմանված պահանջների ամրագրմամբ:

8. Ստեփանակերտ քաղաքի համար սխեման մշակվում է Ստեփանակերտի գլխավոր հատակագծի նախագծային նյութերի կազմում:

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այն համայնքներում, որոնցում ընդգրկված բնակավայրերն ունեն կիրառման համար պիտանի գլխավոր հատակագծեր, սխեման, որպես գոտիավորման ինքնուրույն փաստաթուղթ, մշակվում է համայնքի ղեկավարի կողմից կազմված առաջադրանքի հիման վրա ու նրա պատվերով՝ համայնքի բյուջեի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ ֆինանսական միջոցների հաշվին՝ սույն կարգի 11-36-րդ կետերով սահմանված կարգով:

10. Մինչև սույն կարգն ուժի մեջ մտնելը՝ այն համայնքներում, որոնց բնակավայրերի գլխավոր հատակագծերը գտնվում են մշակման փուլում, սխեմաները մշակվում են սույն կարգի 9-րդ կետով սահմանված կարգով:

11. Սույն կարգի 9-րդ կետով սահմանված դեպքերում սխեմայի մշակման առաջադրանքում ամրագրվում են նաև բնակավայրի սահմաններից դուրս տեղաբաշխված տարածքների զարգացման հիմնական խնդիրներին ներկայացվող պահանջները: Անհրաժեշտության դեպքում առաջադրանքով կարող են ներառվել բնակավայրի գլխավոր հատակագծի որոշ դրույթների արդիականացման պայմանները: Սխեման և բնակավայրի գլխավոր հատակագիծը սույն կարգի համաձայն հաստատվելուց հետո, որպես բաղկացուցիչ մասեր, կազմում են համայնքի գլխավոր հատակագիծը:

12. Համայնքի ղեկավարի կողմից մշակված առաջադրանքի նախագիծը համայնքի ավագանու հավանությանն արժանանալուց հետո հնգօրյա ժամկետում ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարին՝ համաձայնեցման:

13. Սխեմաների առաջադրանքին հիմնական պահանջները ներկայացվում են՝ համաձայն սույն կարգի N 1 հավելվածի:

14. Երջանի վարչակազմի ղեկավարը հնգօրյա ժամկետում համաձայնություն է տալիս առաջադրանքի նախագծին և այն ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, մշակույթի և սպորտի նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ԿԱ արտակարգ իրավիճակների վարչության պետին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետին /այսուհետ՝ շահագրգիռ պետական կառավարման մարմիններ/ համաձայնեցման:

15. Ծահագրգիռ պետական կառավարման մարմինները 15-օրյա ժամկետում համաձայնություն են տալիս առաջադրանքի նախագծին կամ շրջանի վարչակազմի ղեկավարին են ներկայացնում իրենց առաջարկություններն ու դիտողությունները:

16. Երջանի վարչակազմի ղեկավարը շահագրգիռ պետական կառավարման մարմինների առաջարկություններն ու դիտողություններն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում, դրանց հիման վրա լրամշակում է առաջադրանքի նախագիծը:

17. Երջանի վարչակազմի ղեկավարը համայնքի ղեկավարին է տրամադրում նախագծի լրամշակված ու համաձայնեցված տարբերակը, ինչպես նաև սխեմայի մշակման համար ելակետային նյութերը /այդ թվում՝ սեյսմապաշտպանական սահմանափակումների մասին/ տրամադրող պետական մարմինների և կազմակերպությունների ցանկը:

18. Համայնքի ղեկավարն առաջադրանքի նախագծի լրամշակված տարբերակն ստանալուց հետո եռօրյա ժամկետում զանգվածային լրատվության միջոցներով համայնքի բնակչությանն իրազեկում է դրա հասարակական քննարկման օրվա և ժամի, ինչպես նաև մինչև քննարկումն առաջադրանքի բովանդակությանը ծանոթանալու հնարավորության մասին:

19. Քննարկումը կարող է նշանակվել դրա մասին իրազեկման օրվանից ոչ շուտ, քան 10 օր անց՝ հնգօրյա ժամկետում:

20. Համայնքի բնակիչները կարող են մինչև քննարկման օրը համայնքի ղեկավարին ներկայացնել առաջադրանքի նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ՝ անհրաժեշտ հիմնավորումներով:

21. Համայնքի ղեկավարն առաջադրանքի նախագծի հասարակական քննարկման արդյունքում արված դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա, 10-օրյա ժամկետում լրամշակում է առաջադրանքի նախագիծը և այն հաստատում համայնքի ավագանու հավանությանն արժանանալուց հետո:

22. Համայնքի ղեկավարը, առաջադրանքը հաստատելուց հետո՝ «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված՝ նախագծային աշխատանքներ իրականացնող կապալառուի հետ /այսուհետ՝ կատարող/ կնքում է պայմանագիր և տրամադրում անհրաժեշտ ծավալի ելակետային նյութերը: Պատվիրատուի և կատարողի համաձայնությամբ՝ կատարողը կարող է պայմանագրով ամրագրված պայմանների համաձայն հավաքել ելակետային նյութերը կամ դրանց մի մասը:

23. Սխեմաների կազմին և բովանդակությանը հիմնական պահանջները ներկայացվում են՝ համաձայն սույն կարգի N 2 հավելվածի:

24. Պատվիրատուն նախագծային աշխատանքների ավարտից հետո սխեման ներկայացնում է համալիր փորձաքննության: Նախագծային փաստաթղթերը դրանք մշակողի կողմից կարող են ներկայացվել համապատասխան լիցենզիա ունեցող անձին՝ փորձաքննության, եթե այդպիսի պայման նախատեսված է նախագծային աշխատանքների կապալի պայմանագրով:

25. Փորձաքննությունն իրականացվում է պատվիրատուի /կամ պայմանագրով նախատեսված ղեկավարում՝ կատարողի/ և փորձաքննություն իրականացնողի միջև կնքվող պայմանագրի համաձայն:

26. Համայնքի ղեկավարը փորձաքննության դրական եզրակացությունն ստանալուց հետո եռօրյա ժամկետում իրազեկում է հասարակությանը՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005թվականի ապրիլի 26-ի «Լցնաագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» թիվ 218 որոշմամբ հաստատված կարգի, որից հետո սխեման ներկայացնում է շրջանի վարչակազմի ղեկավարին՝ համաձայնեցման:

27. Շրջանի վարչակազմի ղեկավարը հնգօրյա ժամկետում համաձայնություն է տալիս սխեմային և այն ներկայացնում շահագրգիռ պետական կառավարման մարմիններ՝ համաձայնեցման:

28. Շահագրգիռ պետական կառավարման մարմինները 15-օրյա ժամկետում իրենց համաձայնությունն են տալիս առաջադրանքի նախագծին կամ շրջանի վարչակազմի ղեկավարին են ներկայացնում իրենց առաջարկություններն ու դիտողությունները:

29. Շրջանի վարչակազմի ղեկավարը շահագրգիռ պետական կառավարման մարմինների համաձայնությունն ստանալուց հետո եռօրյա ժամկետում սխեման՝ իր եզրակացության հետ միասին, տրամադրում է համայնքի ղեկավարին:

30. Համայնքի ղեկավարը շրջանի վարչակազմի ղեկավարի և շահագրգիռ պետական կառավարման մարմինների դրական եզրակացությունն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում սխեման ներկայացնում է համայնքի ավագանուն՝ հաստատման:

31. Համայնքի ավագանին եռօրյա ժամկետում հաստատում է սխեման:

32. Սխեման մշակվում է 5 քնօրինակից, որոնցից մեկական օրինակ մնում է շրջանի վարչակազմում, համայնքի ղեկավարի և կատարողի մոտ: Սխեմայի մեկական օրինակ մագնիսական /կամ թղթային/ կրիչով ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

33. Հաստատված գծագրերի և աղյուսակների պատճենները տրամադրվում են շահագրգիռ պետական կառավարման մարմիններին:

34. Սխեմայով նախատեսվող՝ հողերի նպատակային նշանակության փոփոխությունները կատարվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

35. Հաստատված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների ցանկացած փոփոխություն կարող է կատարվել նույն կարգով, ինչով հաստատվում է սխեման:

36. Սխեմաների փորձաքննության, համաձայնեցման և հաստատման ժամանակ ծագող վեճերը լուծվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Ս.Գրիգորյան

**Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայի մշակման
առաջադրանքին ներկայացվող հիմնական պահանջները**

Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայի /այսուհետ՝ սխեմա/ մշակման
առաջադրանքում նշվում են՝

ա/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների
/այսուհետ՝ համայնք/ անվանումը, հիմնական ցուցանիշները /տարածքը, հողային ֆոնդի փաստացի
բաշխումը, բնակչության թիվը, ռեսուրսների հիմնական տեսակները, զարգացման հիմնական
հեռանկարները/.

բ/ տվյալներ նախկինում մշակված քաղաքաշինական և հողաշինարարական ծրագրային
փաստաթղթերի մասին.

գ/ տվյալներ նախկինում իրականացված տեղագրական հանույթների,
ինժեներատեխնիկական, երկրաբուսաբանական, հողագիտական հետազոտությունների մասին.

դ/ հողերի օգտագործման նկատմամբ քաղաքաշինական, գյուղատնտեսական,
բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին և հատուկ
կարգավորման դրույթներին վերաբերող պահանջները.

ե/ ինժեներատեխնիկական նախապատրաստմանը, բնական և տեխնածին վտանգավոր
երևույթներից տարածքների պաշտպանության միջոցառումներին, հողերի պահպանությանը
ներկայացվող հիմնական պահանջները.

զ/ սխեմայի գրաֆիկական ու տեքստային մասերին ներկայացվող հիմնական պահանջները
/զծագրերի թիվը՝ համապատասխան մասշտաբներով, տեքստային մասի կազմը և ծավալը/.

է/ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման և հեռանկարային
օգտագործման, դրանց միավորման ու բաժանման վերաբերյալ առաջարկությունները.

ը/ նոր հողերի յուրացման, բարելավման, կուլտուր-կենցաղային և այլ միջոցառումների
իրականացման հնարավորությունները.

թ/ համայնքների գլխավոր հատակագծերի և հողերի գոտիավորման ու օգտագործման
սխեմաների համատեղ մշակման պարագայում սույն հավելվածի «դ» և «ե» կետերի պահանջները
համատեղվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005թվականի
հունիսի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների
գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու
փոփոխման կարգը հաստատելու մասին» թիվ 301 որոշմամբ հաստատված կարգի թիվ 1
հավելվածի 1-ին կետի «է» և «ը» ենթակետերի հետ:

Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները

1. Հողերի գոտիավորման և օգտագործման սխեման /այսուհետ՝ սխեմա/ բաղկացած է գրաֆիկական ու տեքստային մասերից:

2. Սխեմայի գրաֆիկական մասի հիմնական գծագրերը ներկայացվում են համաձայն առաջադրանքի /1:5000 և 1:10000 մասշտաբով/: Առանձին դեպքերում մասշտաբը կարող է ճշտվել պատվիրատուի առաջադրանքով:

3. Սխեմայի մշակման համար որպես հանույթային հիմք օգտագործվում են տեղագրական հանույթները, ինժեներատեխնիկական, միկրոսնյամաշրջանցման, կադաստրային և հողաշինարարական քարտեզները:

4. Սխեմայի գրաֆիկական մասերի վրա ցույց է տրվում հողերի փաստացի և հեռանկարային բաշխումն ըստ նպատակային նշանակության՝ հիմնական /բազային/ տեսակների սահմանմամբ ու քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային, գյուղատնտեսական, ինժեներատեխնիկական և այլ բնույթի սահմանափակումների ամրագրմամբ՝ սույն հավելվածի 5-15-րդ կետերին համապատասխան:

5. Գյուղատնտեսական նշանակության /վարելահող, բազմամյա տնկարկ, խոտհարք, արոտ և այլ հողատեսքեր/:

6. Բնակավայրերի /բնակելի, հասարակական, ընդհանուր օգտագործման և այլն/՝ բնակավայրի սահմանագծերի և քաղաքամերձ գոտիների, ինչպես նաև քաղաքաշինական նորմատիվային պահանջների ամրագրմամբ:

7. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության /արդյունաբերական, գյուղատնտեսական արտադրության, պահեստարանների, ընդերքօգտագործման համար առանձնացված տարածքներ/՝ պահպանական, սանիտարական և այլ սահմանափակող գոտիների ամրագրմամբ:

8. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների՝ ըստ վտանգավորության կարգերի դրանց պահպանական գոտիների ամրագրմամբ, այդ թվում՝

ա/ Էներգետիկայի /ջերմային, հիդրոէլեկտրակայանների, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի, մայրուղային գազատարների և էներգետիկ այլ օբյեկտների համար առանձնացված տարածքներ/.

բ/ կապի /կապի, ռադիոհաղորդումների, հեռուստատեսության, ռադիոռելեային և վերահեռարձակող կայանների ու դրանց սպասարկման համար առանձնացված տարածքներ/.

գ/ տրանսպորտի /ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, խողովակաշարային տրանսպորտի, թունելների, կամուրջների և դրանց սպասարկման համար առանձնացված տարածքներ/.

դ/ կոմունալ ենթակառուցվածքների /ջրամատակարարման, ջրահեռացման, կոյուղագծերի, օրվա կարգավորիչ ջրամբարների, մաքրման կայանների, պոմպակայանների, աղբավայրերի և այլ օբյեկտների կառուցման ու սպասարկման համար առանձնացված տարածքներ/:

9. Հատուկ պահպանվող տարածքների՝ դրանց պահպանական գոտիների ամրագրմամբ, այդ թվում՝

ա/ բնապահպանական /հատուկ պահպանության նպատակով նախատեսված բնության հուշարձանների, արգելանոցների, ազգային և ծառաբանական զբոսայգիների ու պարկերի, բուսաբանական այգիների, արգելավայրերի /բացառությամբ՝ որսորդական/ համար առանձնացված տարածքներ/.

բ/ առողջարարական /բնական, բուժական պաշարներով, բարենպաստ կլիմայով և այլ բնական գործոններով ու պայմաններով օժտված բուժական-առողջարարական վայրերի և առողջարանների համար առանձնացված տարածքներ/.

գ/ հանգստի համար նախատեսված /հանգստյան տների, պանսիոնատների, ֆիզիկական դաստիարակության և սպորտի օբյեկտների, զբոսաշրջիկության բազաների, մանկական ու սպորտային ճամբարների և այլ նմանատիպ օբյեկտների համար առանձնացված տարածքներ/.

դ/ պատմական և մշակութային /պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, այդ թվում՝ պատմամշակութային ու բնապատմական արգելոցների, զինվորական և քաղաքացիական գերեզմանոցների հողերն ու դրանց պահպանական գոտիների համար առանձնացված տարածքներ/:

10. Հատուկ նշանակության /պաշտպանական, սահմանային, ռազմական նշանակության հողեր և օրենքով պաշտպանվող շենքերի ու շինությունների օգտագործման և սպասարկման համար առանձնացված տարածքներ/՝ դրանց օգտագործումը սահմանափակող պաշտպանական գոտիների ամրագրմամբ:

11. Անտառային /անտառներ, վարելահողեր, խոտհարքներ, արոտներ, թփուտներ, անտառային տնտեսության կարիքների համար առանձնացված այլ տարածքներ/՝ հողօգտագործման հատուկ ռեժիմ ունեցող գոտիների ամրագրմամբ:

12. Ջրային /գետերով, բնական և արհեստական ջրամբարներով, լճերով զբաղեցված, ինչպես նաև ջրային համակարգերի օգտագործման և պահպանության համար առանձնացված տարածքներ/՝ սանիտարական պահպանության գոտիների ամրագրմամբ:

13. Պահուստային հողեր /համայնքներին, քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության, օգտագործման իրավունքով չտրամադրված պետական հողերը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կոնսերվացիայի արդյունքում տնտեսական շրջանառությունից հանված հողամասերը, ինչպես նաև ավագուտները, ճահիճները և այլ անօգտագործելի հողերը/:

14. Սլանալի գրաֆիկական մասերի վրա արտահայտվում են նաև քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների սահմանները, տարածքի ինժեներատեխնիկական նախապատրաստման, վտանգավոր բնական և տեխնածին երևույթներից տեղանքի ինժեներական պաշտպանական գոտիների սահմանները, հողամասերի օգտագործման նկատմամբ սեյսմապաշտպանական, գյուղատնտեսական և այլ բնույթի սահմանափակումները, սանիտարական գոտիների սահմանները, հատուկ կարգավորման դրույթներ նախատեսող տարածքների սահմանները, պետական ու համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օգտագործման ուղղությունները, դրանց տրամադրման հերթականությունն ու ծավալները:

15. Սույն հավելվածում նշված բազային գոտիներով, ինչպես նաև հողամասերի օգտագործման նկատմամբ ամրագրվող սահմանափակումներով ընդգրկված տարածքներն ու դրանց սահմանները սլանալի գրաֆիկական նյութերում արտահայտվում են դրանց տարբերակող նշաններով, որոնց կազմը և ձևերը սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության գերատեսչական ակտով:

16. Սլանալի տեքստային մասում նշվում են՝

ա/ սլանալի մշակման հիմքերն ու ելակետային տվյալները, դրանք տրամադրող մարմիններն ու կազմակերպությունները.

բ/ նախկինում մշակված հողաշինարարական և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի հետ փոխադարձ կապը.

գ/ հողօգտագործման նկատմամբ գյուղատնտեսական, բնապահպանական, քաղաքաշինական, սեյսմապաշտպանական, պատմամշակութային սահմանափակումների բնույթն ու հիմնավորումները.

դ/ գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման, բարելավման, պահպանման, արդյունավետության բարձրացման միջոցառումները.

ե/ պետական սեփականություն հանդիսացող հողերի նպատակային նշանակության փոփոխման հիմնավորումները.

զ/ նոր հողերի յուրացման, բարելավման կուլտուր-տեխնիկական, ինչպես նաև հողերի և շրջակա միջավայրի պահպանության միջոցառումները: